

ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ

*Խաչատրուր Արուսյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի մասնագիտական
կրթության և կիրառական մանկավարժության
համահամալսարանական ամբիոն, մանկավարժական
գիտությունների դոկտոր*

ՎԱՆԻ ԵՐԱՄՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐԵԻՆ (1878–1915 ԹԹ.)

Վանի դպրոցների շարքում իր առանձնահատուկ տեղն ու դերն ունեն Երանյան վարժարանը, որը գործել է եվրոպական գիմնազիաների և լիցեյների կրթական ծրագրերով: Վարժարանը տվել է 3000 շրջանավարտ, որոնցից շատերն ընդունվել են Թիֆլիսի Ներսեսյան վարժարանը, Էջմիածնի Գևորգյան և Մոսկվայի Լազարյան ճեմարանները, իսկ շուրջ 100 երանյաններ մասնագիտական բարձրագույն կրթություն են ստացել եվրոպական համալսարաններում և մասնագիտական կրթօջախներում: Վարժարանն ունեցել է անընդմեջ և բեղմնավոր գործունեություն, տվել է գիտության և մշակույթի նշանավոր գործիչներ: Այն խոր հետք է թողել հայ դպրոցի պատմության մեջ՝ մշտապես վառ պահելով ազգային միաբանության և ազգային ինքնագիտակցության ոգին:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ վարժարան, արխիվային նյութեր, ձեռագիր մատյաններ, մասնավոր դպրոց, անվճար կրթություն, գործնական դասեր, որբանոց, նախակրթարան, ուսուցչական մարմին, հայտագիր, ծրագիր:

Հ. Պողոսյանը «Վասպուրականի պատմությունից (1850–1900)» աշխատության 8–րդ գլուխը նվիրել է Վասպուրականի լուսավորության գործի նկարագրին՝ առանձին–առանձին բնութագրելով նահանգի դպրոցները, տվել

դրանց ստեղծման պատմության մասին բավականաչափ հետաքրքրական տեղեկություններ, համառոտ գծերով ներկայացրել մանկավարժների մի քանի սերունդների գործունեությունը: Հեղինակը նշում է, որ «Վան քաղաքից և նրա շրջաններից ծնունդ են առել մեծ թվով մշակույթի գործիչներ, բանաստեղծներ, պատմաբաններ՝ Անանիա և Գրիգոր Նարեկացիները, Գրիգորիս Աղթամարցի, Քուչակը, Հակոբ Արծկեցին, Ներսես Մոկացին, Թովմա Մեծոփեցին, Թովմա Արծրունին, իսկ XIX դարի երկրորդ կեսին՝ Մ. Խրիմյանը, Գ. Մրվանձտյանցը, Ղ. Փիրղալեմյանը, Ա. Թոխմախյանը, Տևկանց (Տեր Սարգսենց–Սարգսյանց) եղբայրները (Երեմիա, Արիստակես, Մեղրակ), Շերենցը և ուրիշները: XIX դարի վերջին Վասպուրականում հաշվում էին ավելի քան 2000 մագաղաթյա ձեռագրեր...»¹: Հենվելով մամուլում հրապարակված հոդվածների, Մատենադարանում պահված ձեռագիր մատյանների, արխիվային նյութերի, Վանի և նրա շրջակա բնակավայրի մասին եղած տեղագրական աղբյուրների վրա² նա նշել է, որ Վասպուրականում և նրա

¹ Հ. Պողոսյան, Վասպուրականի պատմությունից (1850–1900), Ե., 1988, էջ 292:

² Հ. Պողոսյանն օգտագործել է «Վան–Տոսպ, «Արձագանք», «Արծուի Վասպուրական» և այլ պարբերականներում և հանդեսներում հրապարակված հոդվածները, նաև Փ. Թերլեմեզյանի հուշերը, մատենադարանի ձեռագրերը, Գ. Մրվանձտյանցի, Հ. Երանյանի և այլոց գրքերը:

վարչական կենտրոն Վանում եղել են արհեստավորների և առևտրականների դպրոցներ, որտեղ լեզուների իմացությունը, թվաբանության ուսուցումը, գրչագրությունը, վանքերին կից ուսումնարանները գործել են մշտապես:

1820 թվականին Կարապետ Մոկացին եկեղեցուն կից հիմնել է դպրոց. այն թեև կարճատև կյանք է ունեցել, սակայն առաջին լուրջ փորձն էր կանոնավոր վարժարանների ստեղծման արշալույսին: 1826 թվականին այս դպրոցը վերաբացվել է Վանի իշխանապետ Հ. Ղարասեֆերյանի ջանքերով. այստեղ որպես վարժապետ մեծ անուն է հանել Պետրոս Արտամերտցին: 1839 թվականին Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանի շրջանավարտ Հովհաննես Պղպաձե-Ամիրզատյանը (Քոլոզ) Վանում նշանակվել է Այգեստանի Նորաշեն եկեղեցուն կից դպրոցի վարժապետ: Այս դպրոցն ուներ 100 աշակերտ, ուսուցանում էին միայն քերական-այբբենարանով և սուրբ գրքերով: Քոլոզը (1814-1879 թթ.) բնիկ վանեցի, իր ժամանակի զարգացած մտավորականներից էր, տիրապետում էր տաղաչափությանը, գրել է պոեմ և հիշվում է որպես «ԺԹ դարու ուսուցիչ, պատմագիր, տաղագիր»¹:

XIX դարի 40-ական թվականներին Վան քաղաքում ուսուցչական աշխատանքի են հրավիրվում Հակոբ Թոփուզյանը և Շարան Շարանյանը. նրանք ունենալով պատրիարքարանի «հատուկ հրահանգ բացման դպրոցաց»², այստեղ հիմնում են ծխական վարժարաններ, որտեղ աշակերտներին ուսուցանում էին ճարտասանություն, երաժշտություն, թվաբանություն, տոմարագիտություն, աշխարհագրություն, հայ հին մատենագիտություն և հայոց լեզու³: Սա

արդեն լուրջ ձեռքբերում էր ուսուցման բովանդակության ընդգրկվածության ուղղությամբ:

XIX դարի 40-ական թվականների վերջին Վանում գործում էր 6 ծխական դպրոց, 50-ական թվականներին՝ Հիսուսյան մայր վարժարանը (150 աշակերտ), որին կից բացվեց գրավաճառանոց, որտեղ ընթերցողը «կարող է երկու երեք ժամով հոն երթալ և ուզած գիրքը կարդալ ընկերագրութեան կանոնով»⁴: Դասագրքերն էին Մաղմուր, Նարեկը, Ավետարանը, Ժամագիրքը և կրոնական այլ գրքեր: Համբարձում Երամյանի վկայությամբ մինչև 1860 թվականը Վանի դպրոցներում, բացի Վարագա վարժարանից, ուսուցումը տարվել է գրաբարով և հին մեթոդներով (կային նաև պատժի տարբեր ձևեր): 60-ական թվականներից սկսած՝ Վանի նահանգի առանձին դպրոցներում ուսուցումը տարվում էր նոր, առաջավոր մեթոդներով: Դրանցից մեկը Այգեստանում բացված Ղուկասյան վարժարանն էր (100 աշակերտ), որտեղ բացակայում էին մարմնական պատիժները, տարեվերջին անցկացվում էին քննություններ հետևյալ առարկաներից՝ քրիստոնեական ուսմունք, սրբազան և ազգային պատմություն, թվաբանություն, աշխարհագրություն, թուրքերեն և ֆրանսերեն⁵:

Վարժարանում մեծ հեղինակություն էր վայելում Կ. Պոլսում բարձրագույն կրթություն ստացած Մարտիրոս Բյուզանդյանը. նա դասավանդում էր հայկաբանություն, թուրքերեն և ֆրանսերեն: 80-ական թվականներին բացվեցին Շուշանյան (1881 թ.) և Գայանյան (1883 թ.) օրիորդաց վարժարանները, որոնց առաջին 10 շրջանավարտներն իրենց նվիրեցին ուսուցչության ազգա-

¹ «Վան – Տոսպ», Վան, 1913, թիւ 38, հոկտեմբեր:

² Մատենադարան, ձեռագիր 4180, թ. 49:

³ Մատենադարան, ձեռագիր 9424, թ. 165, էջ 3

⁴ «Արծուի Վասպուրական», Վան, 1858, թիւ 7, էջ 214:

⁵ Նույն տեղում, 1859, թիւ 3, էջ 144

նվեր գործին «շարունակաբար վարժու-
հի մնալով, երկար տարիներով տքնել
և աշխատել են իզական սեռի դաս-
տիարակության գործն առաջ տանելու»¹։
Վարժարաններ բացվեցին նաև Այուր,
Կուսենց, Խառակոնիս, Կեն, Գործոթ և
այլ գյուղերում։ Նշենք, որ Այուրի դպ-
րոցը բացվեց 1876 թ. նոյեմբերի 1-ին
Մ. Փորթուզայանի ջանքերով։ «Արձա-
գանք»-ը տեղեկացնում է, որ վարժա-
րանը ձևափոխում է, որ վարժա-
րանը ձևափոխում է, որ վարժա-
րանը ձևափոխում է 200, իսկ ամառը՝
40 աշակերտ։ Դպրոցում աշխատում էին
երկու ուսուցիչ և մեկ տնտես²։

1880 թ. նոյեմբերի 1-ին Վարագա
վանքում Մ. Խրիմյանը բացեց երկրա-
գործական վարժարան՝ նպատակ ու-
նենալով գյուղացիներին սովորեցնել
նոր ձևերով ու մեթոդներով հող մշա-
կելու գործը։ Վարժարանին դրամա-
կան օգնություն ցույց տվեցին հարուստ
ազգայինները։ Մկրտիչ Մանասարյա-
նը երկու տարի շարունակ 1000 ռուբլի
աշխատավարձ էր վճարում գյուղատն-
տես-ուսուցիչ Նշան Մադաթյանին, դրա-
մական օգնություն ցույց տվեցին նաև
Ղզլարի, Փոթիի և այլ վայրերի հայերը։
Վարժարանի տեսուչ նշանակվեց Շվեյ-
ցարիայում համալսարանական կր-
թություն ստացած Խորեն Խրիմյանը։
Նա առաջին անգամ Վասպուրականի
դպրոցներում Մանուել Անանյանի հետ
դասավանդում էր հայրենագիտություն
առարկան՝ հետևելով Գրիմ եղբայրների
մեթոդական հանձնարարականներին,
ըստ որի կազմակերպվում էին ճանա-
պարհորդություններ ու շրջագայությու-
ններ դեպի հայրենի երկրի պատմական
վայրերը, հավաքվում ազգագրական
երգեր, ասացվածքներ, հեքիաթներ,
առակներ, այդ նպատակով տարվում
էին զրույցներ, նախապատրաստական
լուրջ աշխատանքներ։

¹ Գ. Շերենց, Սրբավայրեր, տեղագրություն, Թիֆ-
լիս, 1902, էջ 9:

² «Արձագանք», Թիֆլիս, 1882, թիվ 14, էջ 214:

Վարժարանին մեծ օգնություն ցու-
ցաբերեց Կ. Պոլսի «Սովելոց» հանձնա-
ժողովը՝ ուղարկելով երկրագործական
գործիքների տարատեսակներ, սակայն
Մ. Խրիմյանը՝ չգոհանալով դրանով. «...
պահանջում էր ուղարկել հերկելու, հն-
ձելու, հարդ ու խոտ մանրելու եվրոպա-
կան կատարելագործված մեքենաներ»³։
Մանչեստրի հայերը վարժարանին
նվիրեցին հնձող մեքենա. այն «գործ
էր անվան թե՛ վանքի հողերում և թե՛
վարձով տրվում էր մյուս կալվածատե-
րերին և այդպիսով տարեկան 40 ռուբլու
օգուտ բերում»⁴։ Վարժարանը գործել է
1880–1883 թվականներին. աշակերտնե-
րը տեսական գիտելիքներ ստանալուն
համընթաց՝ մշակում էին վանքի հողա-
տարածությունները, տնկում պտղատու
ծառեր, կատարում գյուղատնտեսական
այլևայլ աշխատանքներ։

Տարեցտարի ավելանում էին Վանի և
նրա մերձակա գյուղերի դպրոցների թի-
վը։ Չիթունու բերած տվյալներով Վաս-
պուրականի հայկական գյուղերում և
Վանում գործել է 120 դպրոց՝ 6845 աշա-
կերտներով և 1854 աշակերտուհիներով⁵։
Իսկ Գ. Սրվանձաթյանցի տեղեկատվու-
թյամբ միայն Վանում և Այգեստանում
80-ական թվականների վերջերին գոր-
ծել են՝ «վարժարանք հայոց 9, ուսանող
մանկունք՝ 1370, օրիորդք՝ 220», մինչդեռ
«թուրքերը,– արձանագրում է նա,– ու-
նին մեկ քյուշտիյե և հինգ մետրեսե, ու-
սանողք՝ 320»⁶։

Հետզհետե դպրոցները համալրվում
էին բարձրորակ դասագրքերով և ուսու-
ցիչներով։ Վանի դպրոցներում աշխա-
տում էին անվանի մտավորականների

³ ԳԱԹ-ի արխիվ, Հ. Առաքելյանի ֆոնդ, վավ. թիվ
182, «Մ. Խրիմյանի կեանքը և գործունեությունը»
(ձեռագիր), էջ 137:

⁴ Նույն տեղում:

⁵ Չիթունի, Հուշիկը Հայաստանի, Կ. Պոլիս, 1919, Ա
Տարի, էջ 67:

⁶ Գ. Սրվանձաթյանց, Երկեր, հ. 1, էջ 397:

փառահեղ մի սերունդ՝ Պողոս Նաթանյան, Մեսրոպ Փափագյան, Մեսրոպ Ճանիկյան, Տիգրան Ամիրճանյան, Խորեն Խրիմյան, Մանվել Միրախորյան, Գևորգ Շերեմ, Մկրտիչ Ավետիսյան (Թերլեմեզյան), Համբարձում Երամյան, Մկրտիչ Փորթուգալյան և ուրիշներ, ովքեր դպրոցական գործին զուգընթաց մանուկ էջերում հանդես են եկել հրապարակախոսական հոդվածներով, գրել են ազգագրական, տեղագրական և պատմաբանասիրական արժեք ունեցող բազմաթիվ աշխատություններ ու գրքեր:

Վերը նշված դպրոցների շարքում իր առանձնահատուկ տեղն ու դերն է ունեցել Երամյան վարժարանը: 1878 թվականին Հ. Երամյանը¹ Վանում հիմնեց «Խնամատար» ընկերությունը. նրա նպատակն էր կրթել ու դաստիարակել որբ ու աղքատ մանուկներին և նրանցից պատրաստել նախակրթարանի ուսուցիչներ ու եկեղեցականներ: Ընկերության կազմում կային 80-ից ավելի անդամներ, որոնց խնամքի տակ էր գտնվում 25 երեխա: 1880 թվականին որբերը տեղափոխվեցին Վանի Կարմրավոր վանքը, որին կից բացվեց առաջին որբանոցը և տեսուչ կարգվեց Հ. Երամյանը: Դպրոց-որբանոցը գոյատևեց չորս տարի: Հ. Երամյանը նոր մղումով ձեռնամուխ եղավ մասնավոր դպրոց հիմնելու դժվարին գործին: Երկարատև սպասումներից հետո վերջապես ստա-

ցավ նախակրթարան բացելու իրավունք: Կույր ուսուցչապետը, հակառակ ծանր փորձություններին և նյութական զրկանքներին, կարողացավ կարճ ընթացքում նախակրթարանը դարձնել ուսումնական հզոր կենտրոն, որտեղ նախնական և միջին կրթություն էին ստանում 400-ից ավելի հայ մանուկներ: Նրանց մեծ մասն ուսանում էր անվճար և «դպրոցէն կստանային գրենական պիտոյք, ոմանք նոյնիսկ սնունդ և զգեստ»²:

Երամյան վարժարանը արևմտահայ դպրոցների մեջ առաջիններից մեկն էր, որտեղ օտար լեզուների շարքում տեղ էր հատկացրել նաև ռուսերենին: Վարժարանի գործունեության բոլոր շրջաններում սովորողների 1/3-ը ստացել է անվճար կրթություն. շատերը ստացել են անվճար գրենական պիտոյք, սնունդ և զգեստ: Ուսման վարձը սահմանվում էր ըստ ունեցվածքի, կային աշակերտներ, որ վճարում էին սահմանված վարձի կեսը: Վարժարանը 80-ականների վերջերին արդեն հռչակվել էր Վանի բարձրագույն ուսումնական հաստատություն. նրա շրջանավարտներն իրավունք ունեին իրենց կրթությունը շարունակել եվրոպական համալսարաններում: 1888 թվականից վարժարանն ամբողջովին վերածվեց ցերեկօթիկի:

Տիգրան Փիրումյանի նախաձեռնությամբ 1884-1885 ուս. տարում վարժարանում սահմանվեցին փորձնական դասեր՝ բարձր դասարանների աշակերտների համար, որոնցից լավագույնները շաբաթական մի քանի դաս ունեին ցածր դասարաններում: Այդ մասին Հ. Երամյանը գրում է. «...յատուկ ժողովի մը մեջ թերի կամ լավ կողմերը մատնանիշ կ'ընեինք՝ եզրակացութիւնները և բանավոր առարկութիւնները արձա-

¹ Համբարձում Երամյանը (1857-1929 թթ.) ծնվել է Վանում: 1868-ին հիվանդացել է ծաղիկ հիվանդությամբ և կուրացել, իսկ 14 տարեկանում՝ որբացել: Նրա դաստիարակության գործը ստանձնել է բանաստեղծ Տ. Ամիրճանյանը: Հ. Երամյանը կանոնավոր կրթություն չի ստացել, սակայն ինքնակրթությամբ ձեռք է բերել հարուստ գիտելիքներ: 1874-ից սկսած՝ աշխատել է Վանի տարբեր դպրոցներում: Առաջին աշխարհամարտի տարիներին տեղափոխվել է Եգիպտոս և աշխատել Պորտ-Սաիդի դպրոցներում, հետագայում՝ նաև Ալեքսանդրիայի Պողոսյան վարժարանում: 1929-ին լույս է տեսել նրա «Յուշարձան Վան-Վասպուրականի» երկու հատորից կազմված գիրքը: Վախճանվել է 1929 թվականին՝ Ալեքսանդրիայում:

² Հ. Երամյան, Յուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, էջ 151:

նագրելով: Տեսնելով այս դրությամբ օգտակարությունը, յետագային սահմանեցինք, որ ամէն շաբաթ մէկ դասատու իր մէկ դասն աւանդէ ի ներկայութիւն ուսուցչական խմբին, որ մանկավարժական յատուկ նիստի մէջ քննադատութեան ու գնահատութեան կ'յ ենթարկէր դասին նիւթը, քանակը, մեթոտը, կամ ձեւերը, կարգապահական միջոցները»¹:

Բուժվելու նպատակով 1886 թվականին Երամյանը լինում է Երևանում, Էջմիածնում, Թիֆլիսում, ապա Կ. Պոլսում և Վիեննայում և օգտվելով առիթից, մոտիկից ծանոթանում տեղի դպրոցներին ու կրթական գործին: Վիեննայում նա այցելում է Մխիթարյաններին՝ հաղորդակից դառնում նրանց մշակութային ձեռքբերումներին: Վերադառնալուց հետո անվանի մանկավարժն իր դպրոցում սկսեց իրագործել միջնակարգ դպրոցի ծրագիրը: Հավաքեց նկարներ, աշխարհագրական քարտեզներ, հանքային հանածոների տեսակներ, բնագիտական գործիքներ և դպրոցին կից բացեց թանգարան-մատենադարան: 1900 թվականին վարժարանի 10-ամյա դասընթացը վերակառուցվեց 12-ամյա դասընթացի, որով այն մոտեցավ եվրոպական լիցեյի աստիճանին: Այդ բարեփոխումները վարժարանի առաջ դրեցին հետևյալ խնդիրները.

ա) մատչելի դարձնել վարժարանի շրջանավարտների մուտքը պետական ու եվրոպական համալսարանները:

բ) Որպես հակակշիռ օրըստօրե աճող վարժարանների է՛լ ավելի հզորացնել և կատարելագործել կրթության և դաստիարակության կազմակերպման գործը՝ այն հասցնելով տարածաշրջանում ուսումնագիտական կենտրոնի մակարդակին:

Իր գոյության տարիների ընթացքում վարժարանն անցավ զարգացման որո-

շակի փուլեր՝ որբանոցից վերածվելով նախակրթարանի, այնուհետև՝ լիցեյի: Դպրոցի փուլային զարգացման հետ միաժամանակ հիմնովին բարեփոխվեցին նաև վարժարանի ուսուցման բովանդակությունը, կրթական ծրագրերը, հայտագրերը, դասագրքերը, վերակազմվեց ուսուցչական մարմինը: Այսպես, եթե գործունեության առաջին տարիներին դպրոց-որբանոցի ուսուցչական մարմինը բաղկացած էր միայն Հ. Երամյանից և Տ. Ամիրճանյանից, ապա 90-ական թվականներին այն համալրվեց 8 ուսուցիչներով, որոնց թիվը հետագայում հասավ 20-ի: Անվանի ուսուցիչներից էին Մարտիրոս Նալբանդյանը, Մամբրե Մկրյանը, Տիգրան Գասպարյանը, Խաչատուր Դարբինյանը և ուրիշներ: Վարժարանում ավանդվել են կրոն, եկեղեցական պատմություն, հին ու նոր հայերեն, օսմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, ազգային պատմություն, օսմանյան և ընդհանուր պատմություն, աշխարհագրություն, բնական և չափական գիտություններ, քաղաքական տնտեսություն, բարոյագիտություն, օրենսգիտություն, երկրագործություն, գեղագրություն, գծագրություն, երգ-երաժշտություն, մարմնամարզություն և այլ առարկաներ:

1903 թվականին Հ. Երամյանը ձեռնամուխ եղավ վարժարանի նոր շենքի կառուցման աշխատանքներին. այն ավարտվեց 1907 թվականին²: Վարժա-

¹ 1903-1904 թթ. վարժարանի սաների նախաձեռնությամբ կազմակերպվեց հանգանակություն, որին մասնակցեցին նաև եզիպտահայերը՝ իրենց թեմի առաջնորդ եպիսկոպոս Ավագյանի կոչով և Մարկոսով բեյի նախաձեռնությամբ: Վանի կենտրոնական թաղերից մեկում գնվեց հողատարածք՝ երկհարկանի դպրոց կառուցելու համար: Շի-նարարական աշխատանքներն ավարտվեցին 1907-ին: Դպրոցն անվանակոչվեց Հ. Երամյանի անունով՝ մանկավարժական գործունեության 25-ամյա հոբելյանի կապակցությամբ: Խրիմյան Հայրիկն այդ իրադարձության առթիվ իր հղած կոնդակով մեծ խանդավառություն պարզնեց Վանի հասարակայնությանը:

¹ Հ. Երամեան, նշվ. աշխ., էջ 154:

րանի նոր շենքն ուներ հարմարավետ դասասենյակներ, աշխատանոց, արհեստանոց, գրադարան–ընթերցարան (3000 գիրք), հանդիսությունների սրահ և այլն:

Վարժարանի ուսումնական պլանով նախատեսվում էր.

ա) Նախակրթարան՝ ուսուցման քառամյա դասընթացով. ընդունվում էին 7–ը տարին լրացած երկսեռ երեխաները:

բ) Ուսումնարան, որը մինչև 1885 թվականը գործել է քառամյա դասընթացով (այն հավասարվում էր ներկայիս 8–ամյա դպրոցին), 1900–1913 թվականներին՝ 10–ամյա, ապա ավելացվել է երկամյա բարձրագույն դասընթացը, որով այն մոտեցել է լիցեյի կամ քոլեջի աստիճանին:

Նախակրթարանում ուսման տևողությունը 7 տարի էր, ուսումնարանում՝ 5: Շաբաթական ծանրաբեռնվածությունը նախակրթարանում հասնում էր 25–ից 27, ուսումնարանում՝ 28–ից 33 ժամ: Ուսումնական պլանը կազմվել է 16–17 առարկաների համար: Հիմնական ժամերը բաշխված էին լեզուների (հին ու նոր հայերեն, օսմաներեն, ֆրանսերեն և ռուսերեն) և բնագիտամաթեմատիկական առարկաների վրա: Պարտադիր առարկաների շարքին դասվել է նաև պատմագիտությունը, մասնավորապես, հայոց պատմությունը, որի դասավանդումն արգելելու և հայկական դպրոցներում օսմանական պատմությունը պարտադիր դարձնելու մասին «Արձագանք»–ը տեղեկացնում է. «Բ. Դուռը առաջարկել է հայոց պատրիարքին, որ տաճկական պատմությունը հայ դպրոցներում անպայման պարտավորեցուցիչ լինի, սորան հակառակ՝ խստիվ արգելելով հայոց պատմութեան դասավանդությունը»¹:

Ուսումնական պլանում գեղարվեստական հոսքի առարկաներից որոշակի ժամեր է հատկացվել գեղագրություն, գծագրություն և երգ–երաժշտություն առարկաներին: Դեռևս 1882 թվականին Սաֆար Փեհրիզյանի ջանքերով վարժարանում ստեղծվեց երգչախումբ. այն դպրոցին նյութական նպաստ բերելու նպատակով արևգալի շարականներ էր երգում եկեղեցիներում: 1908 թվականին Կոմիտասի աշակերտ Խոսրով Փախչանյանը ստեղծեց քառաձայն երգչախումբ:

Նկատի ունենալով արևմտահայության սոցիալ–քաղաքական իրավիճակը՝ վարժարանի հայտագրերում և ծրագրերում տեղ են գտել նաև բարոյագիտություն, օրենսգիտություն, քաղաքային տնտեսություն առարկաները՝ շաբաթական մեկական ժամով: Վարժարանում ձեռքի աշխատանքը և արհեստների ուսուցումը որպես առանձին ուսումնական առարկա չի ներկայացվել, հիշատակվում է «երկրագործական ծանոթություններ» առարկան. այն երեխաներին տեսական ու գործնական գիտելիքներ է հաղորդել ոչ միայն գյուղատնտեսական աշխատանքների, այլև բազմաթիվ արհեստների մասին: Մովորաբար բարոյագիտությունը և կրոնը արևմտահայ որոշ դպրոցներում դիտվել է մեկ միասնական առարկա, սակայն Երամյան վարժարանում այն տարանջատվել է՝ բարոյագիտություն և կրոն (եկեղեցու պատմություն) առանձին առարկաների:

Մանկավարժական նոր պահանջներին համապատասխան բարեփոխվում էին կրթական ծրագրերն ու դասագրքերը: Հետզհետե մեծանում էին նաև դպրոցական բյուջեները, սահմանվում էին մրցակցություն գավառային ու քաղաքային դպրոցների միջև, ծավալվում էին լսարանների և գրադարանների

¹ «Արձագանք», Թիֆլիս, 1889, թիվ 12, 2 ապրիլ:

գործունեությունը. «Օտարներն անգամ գարնանքով կը դիտէին և կը փառաբանէին մեր այդ սլացիկ յառաջադիմութիւնը», – հպարտությամբ արձանագրում է Հ.Երամյանը: Օտարերկրացիները կրթության տեսակետից Վանը համարել են «Հայաստանի Աթենք», «Երկլուսավոր դրախտ» և այլ տիտղոսներով:

1908 թվականին Երամյան վարժարանում կրթություն էր ստանում 375 երկսեռ աշակերտ, ուսման տևողությունը 12 տարի էր: Իր կրթական ծրագրով այն մեկ աստիճան բարձր էր ռուսական պրոգիմնազիայից: Վարժարանում հին լեզուներ չէին ավանդվում, արևմտահայ դպրոցներից թերևս միակը, որտեղ չորս տարի շարունակ դասավանդվում էր ռուսերեն: Հրաշալի էր դրված նաև ֆրանսերեն, օսմաներեն, հին ու նոր հայերեն լեզուների առարկայական դրվածքը: Մեծ ուշադրություն էր դարձվում երեխաների ֆիզիկական դաստիարակությանը, շաբաթը երեք անգամ անց էր կացվում մարմնամարզություն՝ հայ սպայի ղեկավարությամբ:

1913 թվականի գարնանը Երամյան վարժարան այցելած ռուս լրագրող Ա. Օլգինինը «Биржевые ведомости»-ում հրապարակել է «Մի՛ մարեք հոգին» հոդվածը՝ արձանագրելով հետևյալը. «Թերահավատ մարդիկ թող ասեն թե Հայաստանը կես կենդանի է, եթե արդեն վերջնականապես կորած չէ, բայց ես ասում եմ ձեզ, որ Հայաստանը կենդանի է և կը մնա կենդանի...: Ես հիշեցի հայ մեծ նացիոնալիստ՝ հանգուցյալ Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսի այդ խոսքերը, երբ դուրս եկա աչազուրկ Համբարձում Երամյանի դպրոցից՝ Վանում: Կենդանի շահագրգռությամբ ես մի քանի ժամ անցուցի այդ դպրոցում դիտելով նրա ոչ հարուստ՝ բայց վայելուչ, ընդարձակ, լուսավոր և մաքուր

շինությունը, ներկա եղա և զանազան դասերի: ...Եվրոպական դպրոցի այդ արտաքին պայմանները՝ ինչպես և նրա ներքին մտավորական ոգին, նրա դաստիարակության ու կրթական գործի ռացիոնալ հիմքերի վրա դրված լինելը, ստեղծված է աչքի լույսից զրկված մի մարդու՝ Համբարձում Երամյանի բարոյական ուժով»¹:

Ռուս լրագրողը թեև հպանցիկ, բայց և այնպես թողել է հետաքրքրական վկայություն Երամյան վարժարանի նշանավոր լինելու մասին, անշուշտ, ընդգծված է նրա կրթադաստիարակչական դերը, եվրոպական մակարդակի վրա գտնվելու հանգամանքները, ուսուցիչների բացառիկ նվիրյալ լինելը և հայ մարդուն հավերժող՝ հայրենասիրական անմնացորդ նվիրումի առկայությունը, Խրիմյան Հայրիկի պանծացնող ոգին:

Փաստորեն Կույր Ուսուցչապետը նախագծել էր Հայաստանի սրտում՝ Վանում, բարձրագույն ուսումնական հաստատություն հիմնադրելու ազգային ծրագիրը: Սակայն, այդ համարձակ ծրագիրն իրականացնելու համար համապատասխան միջոցներ չունեին և հույս էլ չունեին, թե տեղում կարող էր հայթայթել խոշոր ծավալի գումարներ: Հետևաբար, նրա երկրորդ ուղևորության նպատակը, որը նա ձեռնարկեց 1913-ի սեպտեմբերին, համազգային օգնության և բարոյական աջակցության միջոցով այդ վիթխարի ծրագրի իրագործումն էր: 1913 թ. սեպտեմբերի 26-ին Հ.Երամյանն իր երկու ուղեկիցների՝ Հրաչյա և Ոստանիկ Հովհաննիսյանների հետ հասնում է Վաղարշապատ, որտեղ նրանց դիմավորում է Վրթանես վարդապետ Անդրանյանը: Հաջորդ օրը նա ներկայանում է Վեհափառ Տէր Գևորգ Ե.Կաթողիկոսին և նրան է հանձնում Վանի առաջնորդի

¹ Վանի Երամեան վարժարան, Կ.Պոլիս, 1914, էջ 23:

իրեն տված փաստաթղթերը: Երանյանը երեք ամիս մնաց Կով–կասում, մասնակցեց Գևորգյան ճեմարանի հիմնադրման 40 ամյա տարելիցին և գրերի գյուտի 1500–ամյակին նվիրված հոբելյանական արարողություններին¹:

Վարժարանի հասույթը հիմնականում գոյանում էր սովորողների կրթաթոշակից (այն տարեկան կազմում էր 600 օսմանյան լիրա) և նվիրատվություններից: Իբրև հաստատուն եկամուտ վարժարանը ստանում էր Նոր–Նախիջևանից Իվան–Պոպովի կտակած 100 լիրայի 6 % –ն՝ ի հաշիվ երեք որդեգիրների (վերջին 4 տարվա մասնավոր աղբյուրից տարեկան 100 լիրա), 1911–1912 ուստարվա 1100 լիրա բյուջեի բացը փակվել է Պետերբուրգի եկեղեցական խորհրդի, Ալեքսանդր Մելիք–Ազարյանի և ռուսահայ մեկ այլ բարեգործի նվիրած 1000 ռուբլի գումարով: Իր գործունեության 37 տարիների ընթացքում վարժարանը ծախսել է 12000 օսմանյան ոսկի: Թեև յուրաքանչյուր տարեշրջանի համար նախահաշվի պահանջած գումարն ամբողջությամբ չէր ապահովվում, այսուհանդերձ, վարժարանը պատվով է կատարել իր ազգանպաստ առաքելությունը:

1913 թ. դեկտեմբերին Հ. Երանյանը Թիֆլիսում հայոց բարեգործական ընկերության նախաձեռնությամբ հանդես է եկել դասախոսություններով և անդրադառնալով Երանյան վարժարանի ուսումնական և տնտեսական հարցերին՝ հետաքրքրական տեղեկություններ է հաղորդել նաև Վանի դպրոցների և նրա կրթասեր բնակչության մասին: Նա տեղեկացրել է, որ դպրոցը տարեկան

100 ոսկի է ստացել ռուսական կառավարությունից՝ ուսման բովանդակության մեջ ռուսերենը պարտադիր առարկաների շարքին դասելու համար: Վարժարանն ունեցել է 4 նախակրթարան և 7 հիմնական դասարան: Նախատեսվել է բացել նաև 8–րդը, որը պիտի կոչվեր «Հայկական քոլեջ»: Քաղաքի ազգային ծխական դպրոցների տարեկան բյուջեն 4140 ոսկի էր, իսկ նրա 25 հազար հայ բնակիչներից՝ 5600–ը սովորել են թե՛ ազգային և թե՛ օտար դպրոցներում²:

1913 թ. դեկտեմբերի 14–ին Հայ բարեգործական սրահում Երանյանը կարդացել է դասախոսություն՝ նվիրված Արևմտյան Հայաստանի տնտեսական, քաղաքական և մշակույթային կյանքին: Դասախոսությանը ներկա էին մագիստրոս առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոսը, մտավորականներ, հասարակական ու քաղաքական գործիչներ: Իր ճառում Երանյանը քննադատում է ցարական Ռուսաստանի անտարբերությունը հայկական հարցի վերաբերյալ: Նա խստորեն քննադատում է նաև արևելահայ դրամատներին այն բանի համար, որ նրանք Վանում և Կարինում նույնիսկ մեկ հողային բանկ չստեղծեցին, չհիմնեցին նաև ոչ մի վարժարան ու ապաստարան հայ որբերի համար:

Մամուլն ըստ ամենայնի լուսաբանում էր Հ. Երանյանի կովկասյան շրջագայությունների նպատակը, լայնորեն մեկնաբանում Վանում բարձրագույն դպրոց բացելու նրա ծրագրերը: Այդ մասին խանդավառությամբ ծանուցում է նաև Մկրտիչ Փորթուգալյանի «Արմենիա» հանդեսը³: «Վանի Երամեան վար-

¹ 1913 թ. հոկտեմբերի 12–15–ը՝ 10 տարի ուշացումով, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում մեծ հանդիսությամբ տեղի ունեցավ գրերի գյուտի 1500 ամյակը՝ «համօրէն հայ ազգի պատգամաւորներուն մասնակցութեամբ»:

² «Կովկասի Լրաբեր», Թիֆլիս, 1913, թիվ 279, 13 դեկտեմբեր:

³ «Արմենիա» հանդեսը հիմնադրել է Մ.Փորթուգալյանը Մարտիում 1885 թվականին: 1914 թ. մայիսին տեղի ունեցավ Մ.Փորթուգալյանի հասարակական, քաղաքական, հրապարակախոսական և մանկավարժական գործունեության 40 ամյակը

Ժարանի հիմնադիր տեսուչ Ս.Հ.Երամեան, – արձանագրում է հանդեսը, – որ Էջմիածնի մեջ կատարուած մեծ յոբելեանի հանդէսին մասնակցած է՝ Վասպուրականի ներկայացուցչի պաշտօնով, Թիֆլիզ ալ երթալով հանգանակութիւն ձեռնարկած է: Կը յուսանք որ Կովկասի հայերը պիտի գիտնան գնահատելով քաջալերել Վանի այս բազմավաստակ և անվհատ կրթական գործչի ձեռնարկը, որի օգտակարութիւնը երաշխավորութեան չկարօտիր այլևս, իրեն վրայ ունենալով այնտեղ իր խոստացած արդիւնքները և երկարատև ձեռնարկը»¹:

Երեքամյա կովկասյան խոստումնալից շրջագայությունից հետո Հ.Երամյանը 1914 թ. հունվարի 1–ից իր առաքելությունը շարունակեց Կ.Պոլսում «... որու դուռները հայութեան առջև կը բացուէին բարենորոգումներու գեղածիծաղ հեռանկարով և պիտի գոցուէին հայութեան բնաջնջումի սկզբնավորութեամբ», – ցավով արձանագրում է նա:

Պոլսում Երամյանը մնաց վեց ամիս. բնակվում էր Բերա թաղամասում՝ ազգային հիվանդանոցի բժշկապետ դոկտոր Ըելալյանի տանը: Այդ շրջանում նա մոտիկից շփվեց Մաղաքիա Օրմանյանի, հանրաճանաչ երգիչ Արմենակ Շահնուրադյանի, Կոմիտասի և այլոց հետ: Առիթից օգտվելով նա այցելեց Ֆրանսիայի դեսպան Պոնրաբիին՝ խնդրելու նրա միջնորդությունը Ալիանս Ֆրանսեզին՝ Երամյան վարժարանի նպաստներն ավելացնելու ակնկալիքով: Երամյանի Պոլիս ուղևորության հիմնական նպատակը նույնպես հասույթի նորանոր աղբյուրներ գտնելն էր՝ իր ծրագրերն իրականացնելու համար: Թերևս դրա համար էր, որ այդ օրերին Պոլսում գտն-

վող Օլգենին Բերեգովսկու խորհրդով նա ներկայացավ նաև Ռուսաստանի դեսպան Գիրսին: Դեսպանը խոստացավ նամակ հղել Պետերբուրգ պատկան մարմիններին՝ 1000 ռուբլու փոխարեն (1911–ից վարժարանը ստանում էր ռուսերենի դասա–վանդման համար) տարեկան 4000 ռուբլի հատկացվեր վարժարանին:

Պոլսաբնակ նախկին երամյանականների նախաձեռնությամբ 1914 թ. մարտի 22–ին Բերայի Էրմիս Սիլլոդոսի սրահում կազմակերպվեց Հ.Երամյանի մանկավարժական գործունեության 40–ամյա հոբելյանը: Հանդիսությանը մասնակցում էին Կ.Պոլսի պատրիարք Զավեն Սրբազանը, մտավորականներ, կրթության և մշակույթի նշանավոր ներկայացուցիչներ, նաև՝ պոլսաբնակ վանեցիներ: Հանդիսության կազմակերպիչն ու նախագահը Վահան Փափազյանն էր:

Արարողությունը սկսվեց Կ.Պոլսի նախկին պատրիարք Մ.Օրմանյանի շնորհագիր նամակի ընթերցումով: Հանդիսության բացման խոսքում Վ.Փափազյանը ներկայացրեց հավաքույթի նպատակը, իսկ նախկին ընթացավարտների անունից հոբելյարին նվիրված ուղերձը կարդաց Գեղամ Վանիկյանը: Հայրենակիցներից շնորհակալական խոսք ասացին փաստաբան Կարապետ Սոլախյանը, Մարկոս Նաթանյանը և ուրիշներ:

Խոսեցին նաև ազգային երեսփոխաններ, հրապարակագիրներ, ուսուցիչներ, որոնք ընդգծեցին հատկապես Երամյանի կյանքի ու գործունեության կարևոր դրվագները: Խոսեց նաև Գրիգոր Զոհրապը: Իրեն հատուկ պերճախոսությամբ նա գնահատանքի հետևյալ խոսքերն ուղղեց Վանի Ուսուցչապետին. «Ամենքն ալ այս ծերունին կը հարգեն իբր մտքի, կրթութեան վեթերան մը,

և «Արմենիա» հանդեսի 25 ամյա հոբելյանական հանդիսությունը:

¹ «Արմենիա», Մարտի, 1913, թիւ 15, 12 նոյեմբեր:

իսկ ես, Պրն Երամեան, Ձեր մէջ կը տեսնեմ և կ' ողջունեմ վիպասան մը. Դուք ոչ թէ վէպ գրած եք, այլ Ձեր կեանքը վէպ մը եղած է, ամէնէն առասպելականը չգրեցիք Դուք, այլ ապրեցաք անոր մէջ...: Լոյսէ զուրկ, լոյս տարածեցիք»¹: Պատասխան խոսքում Երամյանը հուզմունքով նշում է. «Ես պարտքս միայն կատարած եմ, թէ 11 տարեկանէս լուսագուրկ կեանքիս հաճոյքը փնտռած եմ ուսանելու և ուսուցանելու մէջ, իբրև կեանքի կանոն առնելով ամենևին գործը չգոհել հաճոյքին և նշանաբան ընտրելով ընել լաւը և եթէ կարելի է լաւագոյնը»²:

Այդ օրերին նրա նախկին սաներից մեկը «Բյուզանդիոն»-ի էջերում երախտագիտության բարձր զգացումով գրում է. «... ինքն իր վրայ առած էր դպրոցական կրթութեան, մանուկ ու պատանի անհատականութեան նկարագիրը դարբնող սոյն կարևոր դասերը, ինչպէս են բարոյագիտութիւն, փիլիսոփայութիւն, պատմութիւն, ազգային և ընդհանուր ազգաց պատմութիւն, հայ և օտար մատենագիտութեան պատմութիւն և կրօնի քննական պատմութիւն»³:

Գր. Զոհրապի նախաձեռնությամբ և մտերիմների աջակցությամբ Կ. Պոլսում նույն թվականին հրապարակվեց «Երամեան վարժարան» փոքրածավալ գրքույկը, որի մէջ համառոտագրված ներկայացվել է վարժարանի 36 տարվա գործունեությունն ու պատմությունը: Տպագրական ծախսերը փակելու համար կազմակերպվեց թատերական ներկայացում՝ Զարիֆյանի խմբով: Գրքույկի հրապարակման աշխատանքներին մասնակցում էին նաև Արշակ Գարակեռոյանը, Սիմոն Գայսերյանը, Գրիգորիս

Երամյանը, հայկական բանկի տնօրեն Թագվոր Սուքիասյանը և ուրիշներ:

Սակայն Երամյանի ծրագրերն իրականացնելու համար ժամանակ և հզոր միջոցներ էին հարկավոր: Թերևս այդ պատճառով կեդրոնական վարչության հանձնարարությամբ Ոսում-նական խորհուրդը մանրակրկիտ քննարկեց Երամյանի նախագիծը, հանգամանորեն ուսումնասիրեց կրթական ծրագրերը, վարժարանի 36 տարվա պատմությունը և կազմեց համապատասխան տեղեկագրեր, որոնց հիման վրա Քաղաքային ժողովն այն օրակարգ մտցրեց:

1914 թ. հուլիսին պոլսահայ թերթերն արդեն ծանուցեցին, որ «Կեդրոնական վարչութեան Խառը ժողովի նախորդ օրուայ նիստին մէջ որոշած և արձանագրած է, որ Երամեանի կտակին տոկոսներէն տարեկան կարևոր հատոյթ մը յատկացուի Վանի Երամեան վարժարանին՝ կտակարարին անունով սաներ պահելու պայմանաւ»⁴: Նույն պայմաններով նմանատիպ օգնություն խոստացավ նաև Սանասարյան խնամակալության ատենապետ Գաբրիել Նորատունկյանը «... Խնամակալութիւնը ի վիճակի է Սեբաստիա փոխադրուած նոր Սանասարեանէն զատ ցերեկօթիկ վարժարան մը ևս պահելու ի Կարին՝ տարեկան 1200 ոսկոյ պիտուճեով և թէ նոյնքան մը ևս պիտի կրնայ յատկացնել մեր վարժարանին, որ իր արդիւնալից յարատևութեամբ Կարնոյ գիշերօթիկ Սանասարեանի դէր կատարած է Վանայ մէջ»⁵:

Այսպիսով, իր երկրորդ ուղևորության առաքելությունը համարելով հաջողված և ավարտված, Հ. Երամյանը երանությամբ արձանագրում է. «Թիֆլիզի Թամարեան կտակն ևս հաշուելով՝ հասոյ-

¹ «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1914, թիւ 1460, մարտ 11/24,:

² Հ. Երամեան, նշվ. աշխ., էջ 267

³ «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1914, թիվ 5295, մարտ 10/23:

⁴ Հ. Երամեան, նշվ. աշխ., էջ 277-278:

⁵ Նույն տեղում:

թի եռեակ տարբեր աղբիւրներ ուրեմն գրեթէ ապահովուած կրնային համարուիլ, և ես կ'չ երագէի իբր երկու ամիսէն նիւթական և բարոյական նոր ուժերով զինուած վերադառնալ Վան՝ 1914-1915-ի տարեշրջանը կազմակերպելու աներկևան յոյսով: Նորատունկեան էֆենտին խնդրագիրս և դպրոցիս ծրագրին մէկ պատճենը խնամակալութեան հետագայ նիստերուն պիտի ներկայացնեմ՝ կանխաւ յաջողութեան ամէն հաւաստիք տալով ինձ: Բայց աւա՛ղ, իր անակնկալ մեկնումն Պոլիսէն և ընդհանուր պատերազմի փոթորիկը վեր ի վայր պիտի շրջէին ամէն բան»¹:

Իր միսիան Կ.Պոլսում ավարտված համարելով Երամյանը 1914 թ. հունիսի վերջերին մեկնեց Զմյուռնիա: Զմյուռնիայի հայությունն ու մտավորականությունը հանուր պատշաճի դիմավորեցին և ընդունեցին նրան: Այդ օրերին թերթերը հանգամանորեն լուսաբանեցին Հ.Երամյանի հասարակական ու մանկավարժական արգասաբեր գործունեությունը, ըստ ամենայնի մեկնաբանվեց նաև նրա առաքելության ազգանվեր նպատակը, առաջիկա ծրագրերն ու անելիքները՝ կապված վարժարանի հետագա գործունեության հետ: Իր ուղերձում իզմիրցի վաստակաշատ ուսուցիչ Սարգիս Ամատյանը հնչեցրեց Երամյանին արժևորող ու բնութագրող այն գաղափարը, որ նրանք, ովքեր իրենց հոգիներում պարփակում են փոքրոգություններ, անձնական գծուծ շահասիրություններ և այլ արատներ, ապա կարող են իրենց անձը դաստիարակել այս պատվական քաղաքացու, Մեծ Հայի կենդանի օրինակով, ով կարողացել է բազում փորձություններ հաղթահարելով՝ դառնալ ուղեցոյց և առաջնորդ բազմահազար հայ ուսուցիչների և կրթական գործիչների հա-

մար, քանի որ հանձին Երամյանի նրանք ճանաչում են հրաշագործ մի մարդու, կատարյալ մի ուսուցիչի. «...Վերջապէս մենք ամենքս որ քիչ շատ թերահաւատներ ենք և չենք հաւատար թէ այս դարուն մէջ հրաշք կրնայ գործուիլ, աղեկ ուսումնասիրենք Համբարձում Երամեանի ոսկեղենիկ հաւատքը և երկաթէ կորովը, որոնք հրաշալի արդիւնքներ արտադրած են: ... Եվ մինչ ամենուրեք ազգային կրթական հաստատութիւններ կը տառապին հակառակութեանց ու անհամաձայնութեան մէջ, Երամեան իր տասնամեայ շրջանով վարժարանը լիսէի բարձրացնելու համար պանդխտութեան ցուպը ձեռք առած է: Ահա մեծագոյն հրաշքը: Պատիւ և ողջոյն մեր վաստակաւորին»²:

Այսուհանդերձ, Երամյանի իզմիրյան ուղևորությունը չտվեց սպասված արդյունքը, քանի որ օգոստոսի 1-ին հայտարարված պատերազմը Իզմիրի կյանքը զլխիվայր շրջեց: Դադարեցին ամեն տեսակի գործառնությունները, հայտարարվեց զինվորագրություն, ընդհանուր տազնապն ու խուճապը մոլեգնեց ամենուր: Ահա թե ինչ է պատմում Երամյանն իր անավարտ ուղևորության մասին. «... Այսպէսով հազիւ շուրջ 100 ոսկւոյ գումար մը կը հանգանակուի և ձեռնարկուած միջոցները կես ճամբուն կը լքուին... և սեպտեմբերի 12-ին՝ ըստ հին տոմարի, թակարդէն կը պրծինք և Մակտա շոգենաւով կը մեկնինք դէպի Աղեքսանդրիա...»³:

Աղեքսանդրիան դարձավ Հ.Երամյանի վերջին հանգրվանը, որտեղ հայրենաբաղձ տարագիրը՝ Վանի հավերժական կարոտը սրտին, 1929 թվականին պիտի կնքեր իր մահկանացուն:

² «Արևելեան մամուլ», Զմյուռնիա, 1914, 6 յուլիս, էջ 289-290:

³ Նոյն տեղում:

¹ Նոյն տեղում:

Երամյան վարժարանը հայկական նշանավոր դպրոցների շարքում լավագույններից էր և մեծապես նպաստել է հայ դպրոցի և կրթության զարգացման առաջընթացին: Վարժարանը տվել է 3000 շրջանավարտ, որոնց մեջ եղել են նշանավոր մտավորականներ, հասարակական ու քաղաքական գործիչներ. շրջանավարտներից շատերն ընդունվել են Թիֆլիսի Ներսիսյան վարժարանը, Էջմիածնի Գևորգյան և Մոսկվայի Լազարյան ճեմարանները, իսկ ավելի քան 100 երամյաններ մասնագիտական բարձրագույն կրթություն են ստացել եվրոպական համալսարաններում և մասնագիտական կրթօջախներում:

Աշակերտները սովորել են նաև կահագործություն, կոշկակարություն, դերձակություն և այլ արհեստներ, որոնք ամուր բազա են հանդիսացել տեղական արհեստների պահպանման, ինչպես նաև արհեստների նոր ճյուղերի արմատավորման և զարգացման համար: Վարժարանն իր կրթասիրական ավանդույթներով և ինքնատիպությամբ լավագույն օրինակ է ծառայել ազգագրական, տեղագրական, հայրենագիտական նյութերի հավաքման և մշակման, դպրոցներին կից արհեստանոցների, գրադարան-ընթերցարանների ու թանգարանների ստեղծման գործում:

Վարժարանն արժանացել է հասարակայնության բարձր գնահատանքին: Այդ առթիվ Ա. Օլգինինը անթաքույց հիացնունքով գրում է. «Եթե Վան քաղաքի և նրա շրջակայքի հարիւրավոր, հազարավոր երեխաներն իրենց պատրաստությամբ գոյութեան պայքարի համար պարտական են այդ դպրոցին, ապա հայ ժողովուրդը և հայ եկեղեցին պարտական են նրան նրանով, որ նա եղել է տասնեակ տարիների ընթացքում միակ

ազգային դպրոցը, որ հաջողությամբ կռվել և այսօր էլ կռվում է հայ ազգաբնակչությունը փչացնող զանազան հոսանքների դեմ...»¹:

Վանի Երամյան վարժարանը, իսկապես, նոր երևույթ էր Արևմտյան Հայաստանի սրտում: Չպետք է անտեսել մի կարևոր հանգամանք նույնպես. Վանի դպրոցում են իրենց կրթությունն ու դաստիարակությունը ստացել դիմադրական շարժման այն նվիրյալները, ովքեր համառորեն և արյան գնով դիմակայել են հայրենի քաղաքը թուրքական կանոնավոր բանակի հարձակումներին ինչպես 1896 թվականի հայկական զանգվածային ջարդերի, այնպես էլ 1915 թվականի Մեծ Եղեռնի շրջանում: Եվ եթե հայ մեծահարուստները Պոլսի, Թիֆլիսի, Բաքվի և այլ քաղաքների փոխարեն իրենց կապիտալն ամբողջովին ներդնեին Արևմտյան Հայաստանի բարգավաճմանը և ամեն կերպ ձգտեին հասնել դրա քաղաքական, իրավական ու սոցիալական ապահովությանը, ապա կստեղծվեր հզոր ուժ ընդդեմ թուրքական հայաջինջ քաղաքականության:

Վարժարանն ունեցել է անընդմեջ ու արգասավոր գործունեություն, տվել է գիտության և մշակույթի նշանավոր գործիչներ: Այն խոր հետք է թողել հայ դպրոցի պատմության մեջ՝ մշտապես վառ պահելով ազգային միաբանության և ազգային ինքնագիտակցության ոգին:

Հոդվածի ներկայացման փարեթիսիլը 07.02.14 թ.

¹ Վանի Երամյան վարժարան, Կ. Պոլիս, 1914, էջ 25:

ЕРАМСКАЯ ГИМНАЗИЯ ВАНА В КАНУН ГЕНОЦИДА (1878–1915гг.)

ШОГИК ВОСКАНЫН

Общегуниверситетская кафедра профессионального образования и прикладной педагогики Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, доктор педагогических наук

Среди школ Вана свое особое место занимала Ерамская гимназия, которая работала по учебным программам европейских гимназий и лицеев. Гимназия насчитывала 3000 выпускников, многие из которых поступили в Нерсесовскую гимназию Тбилиси, Геворговскую семинарию Эчмиадзина и Лазаревскую семинарию Москвы, а около 100 ерамистов получили высшее профессиональное образование в европейских университетах и специализированных учебных заведениях. Деятельность гимназии была непрерывной и бурной. Гимназия оставила глубокий след в истории армянской школы, дав миру известных деятелей науки и культуры и всегда сохраняя дух национального единства и национального самосознания.

Дата представления статьи: 07.02.14 г.

VAN YEREMYAN SCHOOL BEFORE GENOCIDE (1878–1915)

SHOGHIK VOSKANYAN

Chair of Professional Education and Applied Pedagogy, ASPU, Doctor of Pedagogy

Yeremyan School had its special place among the schools of Van. It was oriented by the educational curricula of European gymnasiums and lyceums. The school had 3000 graduates, most of them entered Nersisyan School in Tbilisi, Gevorgyan Seminary in Ejmiatsin and Moscow Lazaryan Seminary. Over 100 graduates studied in European universities and professional schools.

The School leaded a fertile activity and many prominent figures of science and culture were educated in the premises of it. It has a great role in maintaining a spirit of national unity and identity.

Article submission date 07.02.14